



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԳՐԱԳԵՏ ՏՈՔԹ. ԲԱԲԳԵՆ ԲԱԼԵԱՆ-ՏԵՐ ՅԱԿՈԲԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ



Չորեքշաբթի, 16  
Յունիսի կեսօրին, Թեմիս  
բարեխնամ Առաջնորդ Բարձր.  
Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան  
ընդունեց վաստակաշատ  
գրող ու մտաւորական Տոքթ.  
Բաբգէն Բալեան-Տեր  
Յակոբեանի այցելութիւնը:

Իր եղբօր՝ Տոքթ. Չարեհ  
Պալեանի ընկերակցութեամբ,  
Տոքթ. Բաբգէն Պալեան Ազգ.  
Առաջնորդարան եկած էր,  
Առաջնորդ Սրբազանին  
նուիրելու իր ու տիկնոջ՝  
Սեդայի հրատարակած  
գիրքերէն օրինակներ: Ան  
նաեւ խորհրդանշական այլ  
յուշանուէր մը բերած էր  
Առաջնորդ Սրբազանին՝ իր  
հրատարակած յօդուածներէն  
պատառիկներով կազմուած  
«պաստառ» մը (տեսնել  
լուսանկարը), ուր տեղ գտած  
էին մեր մայրենիին ու հայ  
կնոջ նուիրուած գրութիւններ:  
Պաստառին մէջ տեղ գրուած

պատառիկներէն ամենէն ուշագրաւը՝ մեր լեզուին մասին հայ թէ օտար  
գրողներու եւ մտաւորականներու կարծիքներու եւ ներբողականներու  
հաւաքածոյ մըն է, որուն իւրաքանչիւր պարբերութիւնը ուժեղ պատգամ մը  
կը փոխանցէ ընթերցողին, մանաւանդ մեր նորահաս սերունդներուն:

Շնորհիւ Տոբթ. Բ. Պալեանի գուարթախոհութեան ու հաղորդականութեան, անմիջապէս ստեղծուեցաւ մտերմիկ ու ջերմ մթնոլորտ: Խօսակցութիւնը ընդգրկեց հայութիւնը յուզող հարցեր, ինչպէս նաեւ իրանահայ գաղութին ստեղծած հայկական ժառանգութիւնները, տրուած ըլլալով, որ հիւրերը եղած են իրանահայ մեր գաղութի անդամներէն:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց նուէրներուն համար ու իր կարգին, յուշանուէրներ յանձնեց յարգելի հիւրերուն:

## **PRELATE WELCOMES SCHOLAR BABKEN BALIAN-TER HACOPIAN**



On Wednesday, June 16<sup>th</sup>, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed scholar Dr. Babken Balian-Ter Hacopian to the Prelacy. Dr. Balian, who was accompanied by his brother Dr. Zareh Balian, had come to present the Prelate with a book he co-wrote with his wife Seta. Dr. Balian also presented a memento, a poster made of segments

from various articles he has written over the years.

The Prelate and guests discussed a number of issues from concerns facing the Armenian community, to the contributions and legacy of Iranian-Armenians to the Armenian nation, given that the guests hail from Iran.

At the conclusion of the meeting the Prelate thanked the guests for the gifts and for their visit, and presented them with mementos as well.